ՔԱՐՈԶԽՕՍԱԳԱՆ

Տ. ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏՄՃՄՐՈՒՄ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՈՆԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(18 օգոստոսի, 2013թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Մի՛ երկնչիր, Մարիա՛մ, զի գտեր զշնորհս Աստուծոյ»
(Ղուկ. Ա. 30):

Գեղեցիկ է օրը, սիրելի՛ հավատացյալներ, պայծառ արեւով, թերեւս մի քիչ շոգ, բայց Աստծուց տրված այս օրը մեզ՝ քրիստոնյաներիս համար արժեւորվում է Սրբուհի Աստվածածնի՝ Աստվածամոր Վերափոխման տոնի խորհրդով: Տոն, որ ամենքիս մեջ ոչ միայն զորացնում է հույսը, այլեւ ավելի հաստատուն դարձնում հավատքը եւ վստահություն ներշնչում, որ սրբությունը, հնազանդությունը, խոնարհությունը, համեստությունը եւ Աստծո կամքին անմնացորդ հետեւելը ոչ միայն հաճելի եւ ընդունելի են Աստծուն, այլեւ մեզանից յուրաքանչյուրին կարող են դարձնել շնորհընկալ. «Մի՛ երկնչիր, որովհետեւ շնորհ ընդունեցիր Աստծուց»:

Գարեր առաջ, մի ավանդապաշտ, օրենքի հարգն իմացող ժողովրդի մեջ, երբ օրինախախտությունը ոչ միայն դատապարտելի էր, այլեւ շատ անգամներ մահվան սուրն էր կախվում զանցանք կամ հանցանք գործողի գլխին, մի դեպք տեղի ունեցավ: Ահա դեռատի մի օրիորդ կանգնեց մի իրականության առաջ, երբ նրան ավետիս տրվեց. «Ահա պիտի հղիանաս եւ մի որդի պիտի ծնես» (հմմտ. Մատթ. Ա. 23): Այսօր շատերիս համար, թերեւս, երբ մեր իրականության մաս դարձած եւ մեր կյանք ներխուժած հեռուստացույցից կամ համացանցից լսում կամ ընթերցում ենք իրողություններ, երբ դեռատի օրիորդներ դեռ ամուսնական սրբազան խորհրդին չարժանացած հղիանում են, մեր ականջին արդեն իսկ խոտելի չի հնչում: Սակայն պատկերացրեք՝ դարեր առաջ, երբ քարկոծվում էին այդպիսիները, երբ մահվան էին դատապարտվում այդպիսիները, դեռատի մի օրիորդի այդպիսի ավետիս է տրվում: Յուրաքանչյուրը, ով ծանոթ է մեր քրիստոնեության եւ հրեության պատմությանը, գիտի՝ ինչ է նշանակում դա: Աստվածածնի հարեւաններն ու բարեկամները կարող էին տարակուսել. նրանք, ովքեր հիացած էին նրա կուսական ընթացքով՝ պիտի երկմտեին, նրանք, ովքեր փորձում էին նրա հետ մրցել ապտվածպաշտության մեջ՝ պիտի պարտվեին եւ նրանք, ովքեր նրան, որպես համես-

փության եւ հնազանդության օրինակ պետք է ներկայացնեին իրենց դուստրերին, պիտի երկմտեին: Վստահ եմ, որ այս ամենը, դեռատի օրիորդի աչքով անցավ, երբ նա, ինչպես Ավետարանիչն է ասում. «Խռովեցաւ ընդ բանսն հրեշտակի» (Ղուկ. Ա. 29):

Քաջ գիտենք, թե ինչու ընտրվեց Սուրբ Կույս Մարիամը, քաջ գիտենք նրա կյանքի՝ ծննդյան, տաճարին ընծայման, Աստծուն անմոռաց նվիրվելու պատմությունը: Ի նկատի ունենալով նրա համեստությունը, հնազանդությունը, սրբությունը եւ խոնարհությունը՝ Աստված ուղարկեց Գաբրիել հրեշտակին նրան ավետելու. «Ահա պիտի հղիանաս եւ մարդկության համար Փրկիչ պիտի պարգեւես» (հմմտ. Մատթ. Ա. 23):

Մայրության բերկրանքին սպասող յուրաքանչյուր կին, ով լինելով այստեղ՝ ականջալուր է եղել այս ավետիսին, իրապես գիտակցում եւ հասկանում է այն խոր հուզումն ու ապրումը, որ ունեցավ Մարիամ Աստվածածինը: Գիտենք, թե յուրաքանչյուր կին ինչքան է սպասում իր անդրանիկ զավակի, անդրանիկ երեխայի, այն էլ արու զավակի լույս աշխարհ գալուն, բայց նաեւ շատերի համար մտահոգության առիթ պիտի դառնա դաստիարակել, սնել ու կրթել իր զավակին եւ հասցնել նրա երազած ապագային: Բայց տեսեք, որ Աստվածածնին ոչ միայն վիճակված էր կրթել ու սնել մարդկության ապագա փրկչին, այլեւ ճաշակել այն բոլոր դառնությունները եւ զգալ այն ցավն ու վշտը, որ ունենում է որդեկորույս մայրը:

Այսօր Վերափոխման տոնն է. տոն, որ շատերիս մեջ ոչ թե հուսահատություն, այլ հույս պիտի ծնի, որովհետեւ Աստվածածինը, համաձայն ավանդույթի եւ ավանդության, վերափոխվեց երկինք: Նա, ճիշտ է, մահ ճաշակեց, բայց երբ առաքյալները գնացին տեսնելու նրան, այն տեղը, ուր ամփոփված էր Տիրամոր մարմինը, այլեւս չկար, որովհետեւ ինչպես ասվում է՝ վերափոխվեց երկինք՝ նստելու իր Զավակի աջ կողմը, որպեսզի յուրաքանչյուրիս համար բարեխոս լինի իր Միածին Որդուն:

Ամենքիս համար նվիրական եւ սուրբ է «մայր» գաղափարը: Մայր հայրենիք, մայր եկեղեցի եւ այլն. մայր բառով ենք հորջորջում յուրաքանչյուր նվիրական եւ սուրբ բան, որ խոսում է ոչ միայն մեր սրտից, այլեւ պատրաստ ենք դրա համար զոհաբերվելու:

Այսօր, սիրելի՛ մայրեր, ձեր տոնն է նաեւ, ձեր հպարտության եւ ցնծության տոնն է, որովհետեւ հայ իրականության մեջ ամենքդ դարձել եք «Աստվածածին», ամենքդ դարձել եք «Սուրբ Մարիամ», որովհետեւ դուք եք, որ պահպանում եւ դաստիարակում եք ոչ միայն ձեր զավակներին, այլեւ պաշտպանում եք ձեր ընտանեկան հարկը, որ այսօր, ցավալիորեն, վտանգված է, շատ խոցելի եւ շատ շատերի կողմից բացասական երանգներով է որարկվում:

Ասվեց, որ ցավ ի սիրտ՝ հեռուստատեսությունից եւ համացանցից մեր իրականություն ներթափանցած իրողություններ, երբ լսում ու կարդում ենք, մեզ համար գրեթե այլեւս խոտելի չեն հնչում բացասականն ու դատապարտելին: Ո՞ւր մնաց յուրաքանչյուրիս հպարտությունը, ո՞ւր մնաց այն հպարտությունը, երբ յուրաքանչյուրն իր զավակին պատերազմ էր ուղարկում աղոթքը եւ մաղթանքը շուրթերին, որպեսզի նա դառնա ոչ միայն հայրենիքի պաշտպան, այլեւ հավատքի եւ եկեղեցական, կրոնական եւ ազգային արժեքների նահատակ:

Այսօր լայն քննարկումների առիթ է դարձել իրավահավասարության եւ սեռերի, այսպես կոչված, միապեսակության հարցը: Մեզ համար անշուշտ դարերի խորքից ոչ միայն խոսելի, այլեւ օրինակ է, որ մեզ՝ հազարամյա քրիստոնեական արժեհամակարգի վրա խարսխված ժողովուրդին, փորձում են հրամցնել եւ ճաշակելի դարձնել այնպիսի արժեհամակարգ, որը մեզ հարազատ չէ, որը մեր մաշկի գույնին, մեր արյունին համահունչ եւ համախոհուրդ չէ. ու՞ր մնաց մեր հպարտությունը, ո՞ւր մնաց մեր կյանքը եւ մեր պայքարելու ունակությունը: Ո՞ւր ենք մենք, մի՞թե պիտի սահմանափակվենք հեռուստացույցի առջեւ սերիալներ նայելով, մի՞թե այդքան է մեր քաջությունը եւ մի՞թե այդքանով է, որ մենք ինքներս պիտի ոչ թե հուսադրենք, այլ հուսախաբ անենք: Հիշենք Աստվածածնին. նա չերկմտեց, նա չասաց, թե ինչպե՞ս պիտի երեւամ հարեւանների կամ մարդկության աչքին, այլ ընդհակառակը՝ ավետարերին ասաց. «Թող այդպես լինի» (հմմտ. Ղուկ. Ա. 38): Դրա համար Աստված նրան ուժ եւ կարողություն շնորհեց, որպեսզի անցնելով այդ ամենի միջով, կարողանա հաղթահարել եւ դանել այն սուրը, որ պիտի նրա սրտի մեջ մխրճվեր, եւ Աստված նրան մենակ չթողեց, նրա կողքին էր: Վստահ եմ, որ Աստվածածնի խոնարհությանը, հնազանդությանը, նվիրումին եւ համեստությանը հետեւող թե՛ կին, թե՛ մայր եւ թե՛ քույր պիտի միայնակ չմնա:

Տեսնում եմ, որ այստեղ շատ եք դուք՝ սիրելի՛ կանայք, սիրելի՛ մայրեր եւ քույրեր: Յուրաքանչյուրդ փոգորված եւ կերպարանափոխված Վերափոխման խորհրդով՝ խնդրեցեք, որպեսզի Մարիամ Աստվածածինը հզորացնի մայրության գաղափարն ամենքիդ մեջ, մի գաղափար, որ դանելի է դարձնում ամեն մի ցավ, սուգ եւ հաղթահարելի ամեն մի վիշտ:

Մենք գիտենք, որ Քրիստոս եկավ աշխարհ մեզ փրկելու համար, գիտենք նաեւ Նրա ողջ ավետարանական կյանքը, եւ գիտենք, որ Նա շատ անգամ Ինքն Իրեն համեմատում է մարդկային կյանքի անքակտելի եւ անբաժանելի իրականությունը կազմող դեպքերի եւ առարկաների հետ: Հրեաստանում շատ հարգի էր հովիվը, որովհետեւ նա իր կյանքը դնում էր իր հոտի համար, Հրեաստանում շատ հարգի էին այգեգործությունը եւ խաղողագործությունը եւ դրանց հետ կապված յուրաքանչյուր դեպք եւ պատում հասկանալի ու ընկալելի էր դառնում հրեա ժողովորդին: Եւ ահա մի քարոզի ժամանակ մեր Տեր Հիսուս Քրիստոսն ասաց. «Ես եմ ճշմարիտ որթատունկը» (Յովհ. ԺԵ. 1): Այսօր, սիրելինե՛ր, այդ որթատունկի պտուղի՝ խաղողի օրհնության օրն է: Խաղողօրհնեքը կատարվում է Աստվածամոր Վերափոխման տոնին, որովհետեւ նա աշխարհին պարգեւեց այդ որթատունկը եւ նրա պտուղ խաղողը, որ այսօր պիտի օրհնվի: Խաղող, որ մեր հայրենի երկրի գեղեցկագույն եւ ամենահամեղ պտուղներից է, եւ որպես տարվա «առաջին պտուղ»՝ պիտի օրհնենք եւ Ս. Ներսես Շնորհալու աղոթքի շնորհիվ, երկնքից օրհնություն իջեցնելով այդ պտղի վրա, պիտի օրհնենք մեր ողջ երկրի անդաստանները, արտերն ու հանդերը՝ մաղթելով, որ Աստված իր զորության ներքո պահի ու պահպանի մեր Հայրենի երկիրը եւ մեր Եկեղեցին իր հավատացյալների հետ միասին այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. ամեն: